Ուղեցույց

Միայնակ բնակվող կենսաթոշակառուների իրավունքների մասին

Հունվար, 2020թ.

Սույն ուղեցույցը ֆինանսավորվել է ԱՄՆ պետքարտուղարության Հասարակության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Այս կայքում/ուղեցույցում արտահայտված է հեղինակի դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ

1. Հանրային պաշտպանի գրասենյակը տրամադրու՞մ է արդյոք անվճար իրավաբանական օգնություն կենսաթոշակառուներին

Հանրային պաշտպանի գրասենյակը տրամադրում է անվճար իրավաբանական օգնություն միայն միայնակ բնակվող կենսաթոշակառուներին:

2. Ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացնի միայնակ բնակվող կենսաթոշակառուն անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար

Միայնակ բնակվող կենսաթոշակառուն անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար հանրային պաշտպանի գրասենյակ պետք է ներկայացնի կենսաթոշակի վկայականը կամ կենսաթոշակի գրքույկ, բնակության վայրից (համատիրություն, գյուղապետարան, ոստիկանության բնակչության տեղական ռեգիստրը վարող տարածքային մարմին) տրված տեղեկանքը ընտանիքի փաստացի կազմի (միայնակ բնակվելու) մասին տեղեկանք և անձը հաստատող փաստաթուղթը (անձնագիր):

3. Ո՞վ է համարվում կենսաթոշակառու

Կենսաթոշակառու է համարվում այն անձը, ում գրավոր դիմումի հիման վրա կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը նշանակում է կենսաթոշակ, կամ ով օրենքով սահմանված իրավունք (բացառությամբ լիազորագրով ստացած իրավունքի) ունի ստանալու կենսաթոշակ:

4. Ո՞րոնք են կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմինները

Կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմիններն են՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության (այսուհետ՝ ծառայություն) տարածքային ստորաբաժանումները, ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության՝ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումները:

5. Ո՞վքեր ունեն կենսաթոշակի իրավունք

Օրենքով սահմանված պայմանները բավարարելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները կամ քաղաքացիություն չունեցող անձիք, եթե օրենքով այլ բան սահմանված չէ:

6. Ինչպիսի՞ պարտականություններ են սահմանված օրենքով կենսաթոշակառուների համար

Կենսաթոշակառուն պարտավոր է՝

ա) լիազոր մարմին ներկայացնել իրեն վերաբերող հավաստի տվյալներ,

բ) կենսաթոշակ նշանակող ստորաբաժանմանը տեղեկացնել այն հանգամանքների մասին, որոնց առկայությունը կարող է հանգեցնել կենսաթոշակի չափը փոփոխելուն կամ դրա վճարումը դադարեցնելուն:

7. Ինչպիսի՞ հետևանքներ են վրա հասնում այն դեպքում, երբ կենսաթոշակառուն չի կատարում օրենքով սահմանված իր պարտականությունները

Կենսաթոշակառուների կողմից օրենքով սահմանված իրենց պարտականությունները չկատարելու հետևանքով կենսաթոշակառուին ավել վճարված գումարները ենթակա են հետգանձման օրենքով սահմանված կարգով կամ դատարանի վճռի հիման վրա, եթե դադարել է կենսաթոշակ ստանալու՝ անձի իրավունքը:

8. Ո՞վ է հանդիսանում կենսաթոշակային ոլորտի պետական կառավարման լիազոր մարմին

Կենսաթոշակային ոլորտի պետական կառավարման լիազոր մարմինն է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը:

9. Օրենքով սահմանված ինչպիսի՞ լիազորություններ են վերապահված Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայությանը

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայությունը՝

1) մշակում և վարում է պետական կենսաթոշակային ապահովության միասնական քաղաքականությունը.

2) վերահսկում է պետական կենսաթոշակային ապահովության օրենսդրության կիրառման օրինականությունը.

3) իրականացնում է կենսաթոշակ նշանակելու, հաշվարկելու (վերահաշվարկելու) և վճարելու մեթոդական ղեկավարումը.

4) կազմում է Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգի զարգացման պետական համապատասխան ծրագրեր և ապահովում դրանց կատարումը.

5) գործատուներից, պետական այլ մարմիններից ու կազմակերպություններից, ֆիզիկական անձանցից պահանջում է կենսաթոշակ նշանակելու և վճարելու համար անհրաժեշտ փաստաթղթեր, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքում՝ ստուգում դրանց հավաստիությունը.

6) հարկային մարմնից ստանում է շտեմարանը ձևավորելու համար անհրաժեշտ տվյալներ, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերում և կարգով ստուգում դրանց հավաստիությունը.

7) առաջարկություններ է ներկայացնում հարկային մարմին՝ շտեմարան ներառվող տվյալների հավաստիությունը ճշտելու և դրանք փոփոխելու համար.

8) իր լիազորությունների շրջանակում քննարկում է կենսաթոշակային օրենսդրության խախտումները.

9) օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակում, վերահաշվարկում է կենսաթոշակները, ապահովում կենսաթոշակների վճարումը կամ մերժում կենսաթոշակ նշանակելու, նշանակված կենսաթոշակը վերահաշվարկելու դիմումները.

10) վարում է շտեմարանը, շտեմարանից տվյալներ տրամադրում գործատուներին, ֆիզիկական անձանց և պետական մարմիններին ու կազմակերպություններին.

11) օրենքով սահմանված կարգով քննարկում է կենսաթոշակ նշանակելու, վերահաշվարկելու, վճարելու մասին դիմումները.

12) կենսաթոշակ նշանակելու որոշում կայացնելուց հետո՝ տասն օրվա ընթացքում, կենսաթոշակառուին անվճար տրամադրում է կենսաթոշակի վկայական, որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

13) կենսաթոշակային ապահովությանն առնչվող հարցերով դիմող անձանց ապահովում է խորհրդատվությամբ, իսկ անհրաժեշտության դեպքում աջակցում նրանց պահանջվող փաստաթղթեր ստանալու գործում.

14) համագործակցում է համապատասխան հասարակական ու միջազգային կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հետ.

15) վարում է կենսաթոշակային ապահովության կայքէջը.

16) կատարում է սույն օրենքի դրույթներից և իրավական այլ ակտերից բխող այլ գործառույթներ:

10. Ո՞ր պահից է նշանակվում կենսաթոշակը:

Բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու դեպքում կենսաթոշակը նշանակվում է՝

ա) դիմելու օրվանից.

բ) հաշմանդամ ճանաչվելու օրվանից, եթե կենսաթոշակի նշանակման դիմումը տրվել է այդ օրվանից հետո՝ 3-ամսյա ժամկետում,

գ) կերակրողի մահվան օրվանից, եթե կենսաթոշակի նշանակման դիմումը տրվել է այդ օրվանից հետո՝ 6-ամսյա ժամկետում:

11. Կարո՞ղ են արդյոք քաղաքացիները բողոքարկել կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման՝ կենսաթոշակին վերաբերվող որոշումները

Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման՝ կենսաթոշակին վերաբերող որոշումները կարող են բողոքարկվել քաղաքացիների կողմից:

12. Ինչպե՞ս կարող են բողոքարկվել կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման՝ կենսաթոշակին վերաբերվող որոշումները

Կենսաթոշակին վերաբերող որոշումները կարող են բողոքարկվել ինչպես վերադասության, այնպես էլ դատական կարգով:

13. Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին ու՞նի արդյոք կենսաթոշակի իրավունք

Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին կենսաթոշակի իրավունք ունի, եթե նա մշտապես կամ առավելապես բնակվում է Հայաստանի Հանրապետությունում (Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով) և կենսաթոշակ չի ստանում այլ պետությունից:

14. Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ չունեցող օտարերկրյա քաղաքացին ու՞նի արդյոք կենսաթոշակի իրավունք

Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ չունեցող օտարերկրյա քաղաքացին կենսաթոշակի իրավունք ունի, եթե նա կենսաթոշակ չի ստանում այն պետությունից, որի քաղաքացին է:

15. Ո՞րոնք են կենսաթոշակի տեսակները

Օրենքով սահմանվում են կենսաթոշակի հետևյալ տեսակները.

1. աշխատանքային՝

1) տարիքային,

2) արտոնյալ պայմաններով,

3) երկարամյա ծառայության,

4) հաշմանդամության,

5) կերակրողին կորցնելու դեպքում,

6) մասնակի.

2. զինվորական՝

1) երկարամյա ծառայության,

2) հաշմանդամության,

3) կերակրողին կորցնելու դեպքում.

3. սոցիալական՝

1) ծերության,

2) հաշմանդամության,

3) կերակրողին կորցնելու դեպքում:

16. Կարո՞ղ է արդյոք տարբեր կենսաթոշակների իրավունք ունեցող միևնույն անձը ստանալ մեկից ավել կենսաթոշակի տեսակ

Պետական բյուջեից ֆինանսավորվող տարբեր կենսաթոշակների իրավունք ունեցող անձն ունի մեկ կենսաթոշակ ստանալու իրավունք՝ իր ընտրությամբ:

17. Աշխատանքային կամ զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձին նշանակվու՞մ է արդյոք սոցիալական կենսաթոշակ

Անձին սոցիալական կենսաթոշակ չի նշանակվում, եթե նա ունի սույն օրենքով սահմանված աշխատանքային կամ զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք

18. Կարո՞ղ է արդյոք կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը նշանակել կենսաթոշակ այն անձին, ով Հայաստանի Հանրապետությունում չունի բնակության վայր (հասցե)

Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կայացնում է կենսաթոշակ նշանակելը մերժելու մասին որոշում, երբ անձը, ըստ բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, չունի Հայաստանի Հանրապետությունում բնակության վայր (հասցե):

19. Եթե կենսաթոշակառուն փոխում է բնակության վայրը, ինչպե՞ս է վճարվում կենսաթոշակը

Եթե կենսաթոշակառուն փոխում է բնակության վայրը, ապա պետք է դիմի բնակության նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում՝ խնդրելով նախկին բնակության վայրից պահանջել իր կենսաթոշակի գործը: Կենսաթոշակի գործը նախկին բնակության վայրի կենսաթոշակ նշանակվող ստորաբաժանումից տեղափոխվում է բնակության նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում տասնօրյա ժամկետում: Կենսաթոշակառուի բնակության նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակը վճարում է նախկին բնակության վայրից նրա կենսաթոշակի գործն ստանալուց հետո: Կենսաթոշակ վճարելը վերսկսվում է կենսաթոշակառուի նախկին բնակության վայրում կենսաթոշակ վճարելը դադարեցնելու օրվանից:

20. Ո՞րոնք են կենսաթոշակները վճարելու եղանակները

Կենսաթոշակը կենսաթոշակառուի դիմումի հիման վրա կարող է վճարվել անկանխիկ կամ կանխիկ եղանակով:

Կենսաթոշակն անկանխիկ եղանակով վճարելը կենսաթոշակի գումարը կենսաթոշակառուի բանկային հաշվին փոխանցելն է:

Կենսաթոշակը կանխիկ եղանակով վճարելը կենսաթոշակի գումարի տրամադրումն է անձամբ կենսաթոշակառուին կամ նրա փոխարեն կենսաթոշակն ստանալու՝ օրենքով այդ իրավունքն ունեցող անձին:

21. Ո՞րտեղ է կազմակերպությունը վճարվում կենսաթոշակառուին կանխիկ եղանակով տրվող կենսաթոշակը

Կազմակերպությունը կենսաթոշակը կանխիկ եղանակով վճարում է Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակառուի բնակության վայրի հասցեում կամ կազմակերպության գրասենյակում՝ կենսաթոշակի գումարը կենսաթոշակ ստացող անձին տրամադրելու միջոցով:

22. Ի՞նչ փաստաթուղթ է անհրաժեշտ ներկայացնել՝ կանխիկ եղանակով կենսաթոշակ ստանալու նպատակով

Կենսաթոշակ ստացող անձը կենսաթոշակի գումարն ստանալու համար համապատասխան մարմնի աշխատողին է ներկայացնում իր անձը հաստատող փաստաթուղթը: Աշխատողը համադրում է կենսաթոշակ ստացող անձի ներկայացրած փաստաթղթի և վճարման ցուցակի տվյալները: Անհամապատասխանություններ չլինելու դեպքում կազմակերպության աշխատողը կենսաթոշակ ստացող անձին է տրամադրում կենսաթոշակի գումարը: Կենսաթոշակ ստացող անձն ստորագրում է կենսաթոշակների վճարման ցուցակում:

23. Անկանխիկ եղանակով կենսաթոշակ ստացող կենսաթոշակառուն պարտավո՞ր է արդյոք տարեկան առնվազն մեկ անգամ ներկայացնել բանկին իր ողջ լինելու մասին Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող նոտարի հաստատած փաստաթուղթ կամ ներկայանալ բանկ և հայտարարություն տալ իր ողջ լինելու մասին

Կենսաթոշակը անկանխիկ եղանակով ստացող կենսաթոշակառուն պարտավոր է տարեկան առնվազն մեկ անգամ պատշաճ կարգով բանկին ներկայացնել իր ողջ լինելու մասին Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող նոտարի հաստատած փաստաթուղթը կամ ներկայանալ բանկ և հայտարարություն տալ իր ողջ լինելու մասին:

24. Հնարավո՞ր է արդյոք կենսաթոշակի վճարումը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում լիազորագիր ներկայացնելու դեպքում

Այո, կենսաթոշակը կարող է վճարվել է Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող նոտարի վավերացրած լիազորագիրը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում ներկայացնելու դեպքում: Կենսաթոշակը լիազորագրի հիման վրա կանխիկ եղանակով վճարելու համար անձը կենսաթոշակառուի բնակության վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում է ներկայացնում լիազորագիրը և դրա լուսապատճենը: Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման մասնագետը լիազորագրի պատճենը համեմատում է բնօրինակի հետ, պատճենի վրա կատարում է «Իսկականի հետ ճիշտ է» գրառումը, կնքում է տարածքային բաժնի կնիքով և վերադարձնում բնօրինակը: Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման մասնագետը շտեմարան է մուտքագրում լիազորված անձի տվյալները, որոնք, կենսաթոշակառուի տվյալների հետ միասին արտացոլվում են վճարման ցուցակում՝ որպես կենսաթոշակն ստանալու իրավունք ունեցող անձ:

25. Հնարավո՞ր է արդյոք մեկ լիազորագրով անընդմեջ վճարվել տասներկու ամսից ավելի ժամանակահատվածի կենսաթոշակի գումար

Մեկ լիազորագրով անընդմեջ կարող է վճարվել տասներկու ամսից ոչ ավելի ժամանակահատվածի կենսաթոշակի գումար՝ սկսած կենսաթոշակ չվճարված ամսից, բայց ոչ ավելի, քան լիազորագրի գործողությունը դադարելը:

Լիազորագիրը տալու ամսվան հաջորդող տասներկուերորդ ամսից հետո կենսաթոշակի գումարը տվյալ լիազորագրով չի վճարվում:

26. Ի՞նչ ժամկետում պետք է նշանակվի կենսաթոշակը

Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումն անձի դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, ըստ անհրաժեշտության ստուգում է ներկայացված փաստաթղթերի հավաստիությունը և որոշում է ընդունում կենսաթոշակ նշանակելու կամ կենսաթոշակ նշանակելը մերժելու մասին: Կենսաթոշակ նշանակելու որոշում կայացնելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, կենսաթոշակառուին անվճար տրամադրում է կենսաթոշակի վկայական:

Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակ նշանակելը մերժելու որոշում ընդունելու դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր տեղեկացնում է կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձին՝ նշելով մերժելու պատճառները և որոշումը բողոքարկելու կարգը, իսկ եթե կենսաթոշակ նշանակելը մերժվել է օրենքով կամ այլ օրենքներով սահմանված կենսաթոշակ ստանալու իրավունք ունենալու պատճառով, ապա ծանուցում է նրա՝ կենսաթոշակի տեսակը փոխելու իրավունքի և դրա իրականացման կարգի մասին:

27. Ի՞նչ տեղեկություններ են նշվում կենսաթոշակի վկայականի մեջ

Կենսաթոշակի վկայականի մեջ նշվում են կենսաթոշակառուի անունը, ազգանունը, հայրանունը, կենսաթոշակի գործի համարը, կենսաթոշակի տեսակը, ստաժի չափը, կենսաթոշակի չափը, կենսաթոշակը նշանակելու և վճարելու ժամկետները: Վկայականը կնքում և ստորագրում է կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման ղեկավարը:

28. Կենսաթոշակի չափի փոփոխման դեպքում կատարվու՞մ են արդյոք կենսաթոշակի վկայականում համապատասխան փոփոխություններ

Եթե փոխվում է կենսաթոշակի չափը, ապա կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման համապատասխան մասնագետը կենսաթոշակառուի դիմումի հիման վրա կենսաթոշակի գրքույկում գրառում է կենսաթոշակի նոր չափը: Գրքույկն ստորագրում և կնքում է ստորաբաժանման ղեկավարը:

29. Կենսաթոշակի վկայականը կորցնելու դեպքում տրամադրվու՞մ է արդյոք կենսաթոշակառուին նոր վկայական

Կենսաթոշակի վկայականը կորցնելու դեպքում կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակառուին տալիս է նոր վկայական, որի առաջին էջում կատարում է «Կրկնօրինակ» գրառումը:

30. Իրավասու՞ է արդյոք կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակ նշանակելու, կենսաթոշակը վերահաշվարկելու կամ կենսաթոշակի տեսակը փոխելու որոշումն ընդունելուց հետո՝ ստուգել ներկայացված փաստաթղթերի հավաստիությունն հարցումներ կատարելու կամ օրենքով սահմանված այլ միջոցներով

Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը, ըստ անհրաժեշտության, կարող է ներկայացված փաստաթղթերի հավաստիությունն ստուգել նաև կենսաթոշակ նշանակելու, կենսաթոշակը վերահաշվարկելու կամ կենսաթոշակի տեսակը փոխելու որոշումն ընդունելուց հետո՝ փաստաթղթերը տված մարմիններին, կազմակերպություններին հարցումներ կատարելու կամ օրենքով սահմանված այլ միջոցներով:

31. Իրավասու՞ է արդյոք կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձից պահանջել լրացուցիչ փաստաթղթեր

Այո, կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին որոշում ընդունելու դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր ծանուցում է կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձին՝ նշելով, թե ինչ լրացուցիչ փաստաթուղթ պետք է ներկայացնի:

32. Ո՞ր ժամանակահատվածի համար են վճարվում կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման մեղքով չվճարված կենսաթոշակի գումարները

Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման մեղքով չվճարված կենսաթոշակի գումարները վճարվում են անցած ամբողջ ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակի իրավունք է ունեցել: Այն դեպքում, երբ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման մեղքի առկայությունը բացակայում է, չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է կենսաթոշակ վճարելու համար դիմելու ամսվան նախորդող երեք տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել:

33. Ու՞մ է վճարվում կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարը

Կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարները վճարվում են նրա ընտանիքի անդամներին: Այդ գումարներն ամուսնուն կամ 14 տարին

լրացած երեխային վճարվում են անկախ նրա հաշվառման վայրից, իսկ զավակին կամ ծնողին, կամ ընտանիքի այլ անդամի՝ կենսաթոշակառուի մահվան օրվա դրությամբ բնակության նույն վայրում (հասցեում) նրա հետ հաշվառված լինելու դեպքում:

Անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի մահվան դեպքում չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է նաև նրա օրինական ներկայացուցչին՝ ծնողին, որդեգրողին կամ խնամակալին:

Կենսաթոշակառուին հասանելիք, սակայն նրա մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարները վճարվում են նաև այդ գումարներն ստանալու իրավունք ունեցող անձի տված և նոտարի վավերացրած լիազորագրով:

34. Ո՞ր դեպքում է կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման կողմից վճարվում կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարը

Կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում են ներկայացվում կենսաթոշակառուի մահվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում: Վեցամսյա ժամկետում չդիմելու դեպքում կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է ժառանգության իրավունքի վկայագիր ներկայացնող ժառանգին կամ դատարանի վճռով ժառանգություն ընդունած ժառանգին:

35. Ի՞նչ չափով է վճարվում կենսաթոշակը բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպությունում (մանկատանը) ապրող ծնողազուրկ երեխային:

Բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպությունում (մանկատանը) ապրող երեխային վճարվում է կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի 50 տոկոսը: Այդ գումարները, մինչև երեխայի 18 տարեկան դառնալը կամ սահմանված կարգով պետական կազմակերպությունից հեռանալը, կուտակվում են երեխայի անունով հատուկ այդ նպատակով բացված համապատասխան հաշվում և երեխայի 18 տարին լրանալու կամ սահմանված կարգով պետական կազմակերպությունից հեռանալու օրվան հաջորդող մեկ ամսվա ընթացքում վճարվում միանվագ կարգով:

36. Ի՞նչ չափով է վճարվում կենսաթոշակը բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպությունում (ծերանոցում) ապրող ծնողազուրկ երեխային:

Բնակչության սոցիալական պաշտպանության պետական կազմակերպությունում (ծերանոցում) ապրող կենսաթոշակառուին վճարվում է նշանակված կենսաթոշակի աշխատանքային մասը, իսկ այդ կազմակերպությունում ապրող՝ զինվորական կենսաթոշակ ստացողներին՝ նշանակված կենսաթոշակի 50 տոկոսը:

37. Ու՞մ կողմից տրված վարչական ակտի քաղվածքի հիման վրա է նշանակվում համշանդամության կենսաթոշակը

Հաշմանդամության կենսաթոշակը նշանակվում է բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնից ստացված՝ անձին հաշմանդամ ճանաչելու մասին վարչական ակտի քաղվածքի հիման վրա: Հաշմանդամության սահմանելու օրն է՝ քաղվածքի մեջ «Փորձաքննությունը կատարվել է» տողում նշված առաջին ամսաթիվը:

38. Ո՞ր պետական մարմիններն են իրավասու բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրականացնելու բժշկասոցիալական փորձաքննություն

Բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնում են բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինները, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը և տարածքային մարմինները՝ բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովները:

39. Ինչպե՞ս է իրականացվում քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող անձին կենսաթոշակ նշանակելը և վճարելը

Քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող անձն իրեն կենսաթոշակ նշանակելու, վճարելու կամ բժշկասոցիալական փորձաքննության ենթարկվելու համար գրավոր դիմում է քրեակատարողական հիմնարկի ղեկավարին:

Քրեակատարողական հիմնարկի ղեկավարը պատիժը կրող անձի գրավոր դիմումի հիման վրա 10 աշխատանքային օրվա ընթացքում նախապատրաստում է նրան կենսաթոշակ նշանակելու, վճարելու կամ բժշկասոցիալական փորձաքննության ենթարկելու համար անհրաժեշտ՝ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը և ներկայացնում կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում կամ բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու մարմին:

Քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող անձին կենսաթոշակ նշանակելու, վճարելու և նրան բժշկասոցիալական փորձաքննության ենթարկելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

40. Ե՞րբ է դադարեցվում կենսաթոշակ ստանալու իրավունքը

Կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է՝

1) կենսաթոշակառուի մահվան, ինչպես նաև նրան մահացած կամ անհայտ բացակայող ճանաչելու դեպքում.

2) հաշմանդամության ժամկետը լրանալու դեպքում.

3) կերակրողին կորցնելու դեպքում նշանակված կենսաթոշակի սահմանված ժամկետը լրանալու կամ այդ կենսաթոշակի իրավունքը կորցնելու դեպքում.

4) Առնվազն 35 տարվա աշխատանքային ստաժ ունեցող տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքից մեկ տարի շուտ տարիքային կենսաթոշակ նշանակելուց հետո կենսաթոշակառուի աշխատելու դեպքում

Կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակ նշանակելուց հետո մահացած կերակրողի՝ մինչև իր 18 տարին լրանալը հաշմանդամ ճանաչված, աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամ զավակի աշխատելու դեպքում

Կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակ նշանակելուց հետո մահացած կերակրողի՝ տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած կամ հաշմանդամ ճանաչված ծնողների, ամուսնու աշխատելու դեպքում

Կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակ նշանակելուց հետո մահացած կերակրողի՝ չաշխատող և զավակներ չունեցող կամ աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակմամբ զավակներ ունեցող պապիի և տատիի աշխատելու դեպքում

Կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակ նշանակելուց հետո մահացած կերակրողի՝ մահացած (զոհված) կերակրողի 14 տարին չլրացած՝ համապատասխան կենսաթոշակի իրավունք ունեցող երեխայի, եղբոր, քրոջ կամ թոռան խնամքով զբաղվող, ամուսնու կամ ընտանիքի այլ գործունակ չափահաս անդամի կամ օրենքով սահմանված կարգով խնամակալ ճանաչված անձի՝ անկախ տարիքից, աշխատելու դեպքում

5)զինվորական կենսաթոշակ նշանակելուց հետո համապատասխան մարմիններում զինվորական ծառայության անցնելու, ինչպես նաև քրեակատարողական ծառայողի, դատական ակտերի հարկադիր կատարողի, դատախազի կամ դատավորի պաշտոնի նշանակվելու դեպքում.

6) օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունքի ժամկետը լրանալու դեպքում.

7) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու դեպքում.

8) Հայաստանի Հանրապետության երկքաղաքացու՝ մշտապես կամ առավելապես օտարերկրյա պետությունում բնակություն հաստատելու դեպքում (Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում օտարերկրյա պետությունում իր բնակության վայրի հասցեով հաշվառվելու դեպքում).

9) օտարերկրյա քաղաքացուն կամ Հայաստանի Հանրապետության երկքաղաքացուն այլ պետությունում կենսաթոշակ նշանակելու դեպքում.

10) կենսաթոշակի իրավունքը կորցնելու կամ կենսաթոշակի գործում կեղծ (ոչ հավաստի) փաստաթղթեր հայտնաբերելու դեպքում.

11) Հայաստանի Հանրապետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր կնքած պետություններ մշտական բնակության մեկնող (մեկնած) անձանց կենսաթոշակի գործերն ուղարկելու դեպքում:

Սույն մասում նշված դեպքերում կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է այդ հանգամանքներն առաջանալու ամսին հաջորդող ամսվա 1-ից:

Առկա (ցերեկային) ուսուցմամբ ուսումնական հաստատությունում սովորող անձի՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է տվյալ տարվա հուլիսի 1-ից:

41. Ո՞ր դեպքում կարող է կենսաթոշակներից կատարվել պահումներ

Կենսաթոշակից պահումներ կատարվում են՝

1) կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման որոշմամբ, եթե՝

ա. կենսաթոշակառուն ներկայացրել է սխալ տեղեկություններ պարունակող փաստաթղթեր կամ տեղեկություն չի ներկայացրել իր ընտանիքի անդամների թվի փոփոխության մասին, կամ չի տեղեկացրել այն հանգամանքների մասին, որոնց առկայությունը կարող էր հանգեցնել կենսաթոշակի չափը փոփոխելուն կամ դրա վճարումը դադարեցնելուն,

բ. սխալմամբ (օրենքի խախտմամբ) կենսաթոշակառուին վճարվել են ավելի գումարներ.

2) օրինական ուժի մեջ մտած դատավճիռների, վճիռների հիման վրա:

42. Ո՞ր դեպքում կարող է կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակից պահումներ կատարելու մասին որոշում ընդունել

Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակից պահումներ կատարելու մասին որոշում է ընդունում, եթե ավելի վճարված գումարի չափը չի գերազանցում որոշումն ընդունելու ամսվան հաջորդող ամսվա կենսաթոշակի գումարի կրկնապատիկը, և առկա է կենսաթոշակառուի գրավոր համաձայնությունը: Այն դեպքում, երբ ավելի վճարված գումարի չափը գերազանցում է որոշումն ընդունելու ամսվան հաջորդող ամսվա կենսաթոշակի գումարի կրկնապատիկը, կամ առկա չէ կենսաթոշակառուի գրավոր համաձայնությունը, ապա պահումները կատարվում են դատական կարգով:

43. Ո՞վ է կազմում և հաշվառում Հանրային պաշտպանի գրասենյակի մարզի նստավայր այցելած միայնակ բնակվող կենսաթոշակառուների դիմումը

Հանրային պաշտպանի գրասենյակի մարզի նստավայր այցելած քաղաքացու դիմումը էլեկտրոնային համակարգում կազմում և հաշվառում է մարզի հանրային պաշտպանը կամ համապատասխան աշխատակիցը: